

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գումար 8 ՄԷՏ
Վաճառման 10 ՄԷՏ
Վաճառման 4 ՄԷՏ
Վաճառման 3 ՄԷՏ
Իւրաքանչիւր թերթի գին 60 փր.
Կանոնադրման տարի մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ տակարար թիւն կը լինայ:



Լ Ր Ա Պ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔՆԵՐԸ 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 18 սեպտ.
Օսմանեան փոխառութեան համար
բացուած ստորագրութիւնն առաջարկ-
եալ դուռնարն անցաւ:
Փարիզ 18 սեպտ.
Մար—Մազոն մարաշախտ այս իրի-
կուն հոս հասաւ:
Փարիզ 18 սեպտ.
Սերվիլի իշխանը հոս հասաւ:
Եւր—Օրլան 18 սեպտ.
Ապստամբաց կառավարիչն հանրա-
պետութեան զօրաց հրամատարին յանձնեց
իր կուսակցութեան գրաւած զինքերն
ու չնկերը: Ապստամբը կը ցրուին:
Պրուք գնդապետն առ ժամանակեայ
կերպով քաղաքիս կառավարիչ անուանե-
ցաւ:

Բէլճիա 18 սեպտ.
Երաւարարաց խորհուրդն յառաջի-
կայ հսկող 15-ն սկսեալ ցորենի սուրճն
հաւաքելու որոշում տուաւ:
Փարիզ 18 սեպտ.
Պ. Ռէնիէ անուն գաղղիացին (որ
Մէլի պաշարման ժամանակ լրտեսի դեր
խաղացած և Պալէստինայի ժամանակ
ալ Վաղղիայէն փախած էր) 'ի մահ դա-
տապարտեցաւ (ինքը բացակայ ըլլալով):
Լոնտրա 18 սեպտ.
3500 հրացան և 500 ստուգի ռազմա-
մթերք տանող նաւ մը (հաւանականաբար
Քարթսեսանց կը տանէր) Սուլթանի մօտ
բռնուեցաւ:

Մատրիտ 18 սեպտ.
Քարթսեսանց զարնուեցան Քուէնայի
քով:
Փարիզ 19 սեպտ.
Ռուսիոյ կայսեր առ Տոն Բարդուղի-
մի կը համարուի:
Մար—Մազոն մարաշախտ Փարիզ վե-
րադարձաւ:
Պէլկրատ 19 սեպտ.
Կորչաքոնի իշխանը ծանոց Միւսի իշ-
խանին թէ Սերվիլի իշխանութեան առեւ-
տրական դաշնագրութիւններ կը երկու
իրաւունքը Ռուսիա կը ճանչնայ:

Եւր Օրլան 19 սեպտ.
Սլոնիակահայ զինուորն հետ եղած
իրաւախոսութեամբ մը Պ. Քէլլօի վերա-
հաստատեցաւ կառավարչութեան պաշ-
տօնին մէջ:
Լոնտրա 19 սեպտ.
Օսմանեան նոր փոխառութեան ըս-
տորագրութիւնն այսօր գոցուեցաւ մեծ
և ստոյգ յաջողութեամբ մ'եղաւ:
Ալճէ 20 սեպտ.
Սերվիլի իշխանը մէջ ժամանաւոր զանդ-
ւեղուն պատճառաւ Մէլիէն դարձող
ձեգայիլոցի ուխտաւորաց Ալճէի մոտերն
արգիլուեցաւ:

Մատրիտ 20 սեպտ.
Հանրապետական հիւսիսային բանա-
կին գործողութիւններն սկսան:
Բէլճիա 19 սեպտ.
Կայսրն ամսոյս 27 ին մեր քաղաքէն
սլոնի մեկնի:

Հաննովեր 19 սեպտ.

Կիլեոմ կայսրը Քիլի գնաց:
Պէրլին 19 սեպտ.
Սպանիայէն լուր կուտան թէ Պեր-
մանական պատերազմիկ նաւերը Բարթո-
կալիթ հասան:

Լոնտրա 19 սեպտ.

Սա. Քոնս. 44 15/16
Իոն 1865—
» 1869 58 9/16
» 1871 —
» 1872 84 7/8
Անգլ. Քոնս. 92 5/8
Օսմ. նոր փոխառութիւն 55 1/4
Իրիւրուր 19 սեպտ.
Բամպակ Միտլինկ—Օրլէան 8 1/4—
» Ֆայր Տօլէրա՝ 5 1/8—1 1/4
Ծախուած 12000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանն Եգիպտոսի իւր-
տիւլին Գարու Բէլթիւրաթի վսեմ
Գարաքէհեա Աբուհամադ պէյին վրայ
ունեցած համարման և վստահութեան
նոր ապացոյց մը տալու համար Վեհի-
րութեան ու Միւսիլիւթեան բարձր
ատիճանը շնորհեց Անոր:
Վսեմ. Ա.Բ.Մ.Ք.Մ. ՓԱՇԱՆ՝ ար-
դէն Պալայի ատիճան և առաջին
կարգի Օսմանիէ պատուանշան ու-
նէր, հետեւաբար այս անգամ ստա-
ցած ամենաբարձր ատիճանաւ տէ-
րութեան առաջին կարգի նախարա-
րաց կարգը կը դասի:

Այսպիսի դերադոյն պատիւ մը
ըստ մեզ՝ երկնային վարձատրութիւն
մ'է վսեմ: Աբուհամադ փաշային վեր-
ջին Ժամանակներս ազգին և ազ-
գայնոց ըրած յայտնի և ծածուկ
բարեբարութեանց, որովք ազգին
շնորհակալեաց և օրհնութեանց վրայ
անժխտելի իրաւունք ստացած է:
Կը մաղթենք որ Նորին Վսեմու-
թիւնն անընդհատ յաջողութեամբ
փայլի և յարատեւէ իւր փառաւոր
գրեց մէջ իմիթարութիւն և ի պար-
ծանաւ Հայ ազգին:

Գերմանիոյ կայսրը Բրուսիոյ թա-
գին Բ. կարգի պատուանշանը զրկեց
Բ. Գրան Առաջին թարգման Միւսիլի
էֆէնտիին և օտար լեզուաց թըղ-
թակցութեան դիւանին գրուի խօ-
րատանձեան ցօհաննէս էֆէնտիին:

Կարնոյ նորընտիր կուսակալ և
կայսերական չորրորդ բանակին Միւ-
շիւր վսեմ. Ա.Տ.Մ.Մ. Միւսիլի փաշան
Շուսիւնէն Կ. Պոլիս հասաւ, և շարժու-
միւրջերը պիտի մեկնի մայրաքաղա-
քէս:

Վեցերորդ շրջանակի թաղապե-
տական խորհուրդին անդամաց ընտ-
րութեան քուէարկութիւնն անցեալ
հինգշաբթի օրը կատարուելով ա-

ռաւելագոյն քուէ ոտացան Բեռալի
պէյ, իրիւթաթի էֆէնտի, Պ. Չա-
րիֆի, Մաքսուտ Սիմէն պէյ, Պ. Ե-
նիտիւնեա, Ալի պէյ, Պ. Լըվալ, Ա-
լի էֆէնտի Միւսիլի, և Պ. Պ. ԸՍ-
թամբա, Հօլաւ, Բիւրիք և Օհան-
նէս Ապտալեան:

Անցեալ շաբթու Տալուս փաշա-
յի թաղն հետեւեալ դէպքը պատա-
հեցաւ:

Կայսերական բանակին զօրակա-
ներէն երիտասարդ սպայ մը յիշեալ
թաղը նորատի տիկնոջ մը տունը կը
յաճախէր. թաղին իմամը կատակած ե-
լով թէ սպայն ապօրինաւոր յարա-
բերութիւն ունէր տիկնոջ հետ, դը-
րացի թուրք բնակչաց հետ խորհուրդ
կընէ տունը կոխել՝ երբոր սպայն
նորէն հոն երթայ: Այս խորհուրդով
անցեալ շաբթու իրիկուն մը, երբոր
սպայն նորէն տիկնոջ տունը կեր-
թայ, իմամը դրացիները դուռնա-
րով տունը կը կոխէ և կինն ու սպայն
ծեծելով տունէն դուրս կը քաշէ ու
մինչև ֆաթիհի պահականոցը կը տա-
նի: Հոն 'ի մեծ զարմանս իմամին և
անոր ընկերացեալ թաղեցոյ՝ կը հաս-
կըցուի որ սպայն յիշեալ տիկնոջ եղ-
բային էր: Հետեւաբար իմամն ու իր
միլիտանանք ընկերները ոստիկանու-
թեան բանտը զրկուեցան:

Բաղրատէն սեպտ. 3/15 թուով
հետեւեալը կը գրեն.

Երկաթուղոյ գծին պահապան-
ներէն երկուքը, որ երկու ամսէ 'ի
վեր անկայտ եղած էին՝ սպաննուած
ու գիւնիլին այրած գտնուեցան Հըր-
շովա գետին մէջ:

Երբոր թէ յիշեալ երկու մար-
դոց սպաննուեցին ու այրուեցին ետեւ
գետին քահանայն և վարժապետը
բոլոր գեղացիներն եկեղեցին դու-
մարելով երգչուկ տուեր են՝ որ այս
ոճրագործութեան վրայ բացարձակ
լուծութիւն պահեն: Այս յայտնու-
թեան վրայ քահանայն, վարժապե-
տն և գետին ծերունիները Բաղրատ
տարուելով բանտարկեցան:

Ուրբաթ իրիկուն իզմիտի երկա-
թուղոյ վրայ սարապիւղի վտանգ-
մ'անցաւ:

Ժամը 11ը 20 անցելով Հայտար-
փաշայէն ելնող կառավարման Գըզըլ
—թօփուրի կայարանը գետ նոր ան-
ցած էր, իզմիտէն եկող կառավարման
բը նոյն գծին վրայէն կուգար ամե-
նայն արագութեամբ. վտանգն ան-
հրաժեշտ էր. երկու կառավարման
անպատճառ իրարու զարնուելով պի-
տի ջանքախնէն, եթէ մեքենայեան
արագամտութեամբ Հայտար—փա-
շայի կառավարման անմիջապէս դէ-
պի ֆէնէր—Պահէնտի չգարձէր:

Այս աղետալի վտանգին պատ-

ՊԱՅՄԱՆՔ

Գուրա գացած լրագրաց ճանդ ու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լիս, Չինիլի խան, Մաթիսի գրասեն-
եակը:
Համար ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուի:

Ճառ պիտի ըլլար հեռագրական թե-
լին աւուրած ըլլալը, որով իզմիտի կա-
ռավարման գալն իմաց չէր տրուեր:

Այսպիսի վտանգ մ'ամեն ժամանակ
կրնայ վտանգել ճանդի երկաթուղ-
ոյն գիծը զոյգ չէ: Բայց դոնէ պէտք
է այն կերպով կարգադրել, որ մին
չհասած՝ միւսը ճանբայ չընէ, կամ
որոշեալ ժամերու մէջ՝ որոշեալ կա-
յարաններու առջև իրարու սպասեն:

Մայրաքաղաքիս լրագրերէն ու-
մանք լուր կուտան թէ Կէլիպօլիսի
շրջակայ անտառներն աւերեց մ'ի
վեր է կայրին: Այս լուրը սխալ է:
Կէլիպօլիսի շրջակայներն անտառ չկայ:

Սիլիվրի տօնահանդէսն յաճա-
խող ուխտաւորաց թիւն այս տարի
ուրիշ տարինքէ շատ աւելի եղաւ:

Յայտնի է որ այս տեսակ տօնա-
հանդէսները գնացողներուն ամենն
ալ բառին բուն նշանակութեամբ
ուխտաւորներ չեն. դողեր, գրպա-
նախոյզեր և ուրիշ այլ և այլ նպա-
տակաւ ուխտեալներ ալ յարմար ա-
ռիթ կը համարին իրենց շնորհաւոր
ուղերձները Սիլիվրի Այազային մա-
տուցանելու:

Սիլիվրի ոստիկանութիւնն անոնց
կարծիքէն չըլլալով՝ հրատարակեց որ
Սիլիվրի գնացող ուխտաւորք անցա-
գիր պէտք է աւանդ, առանց որոյ
Սիլիվրի նաւամատոցը չեն կրնար
ելնել: Այս որոշման համաձայն հըրա-
մաններ զրկուեցան Սիլիվրի իշխա-
նութեան, որ անցագիր չունեցող
անձինքը բռնեն Կ. Պոլիս զրկեն:

ԴՐԱՄԱՆԸ

Նոր փոխառութեան համար Լոնտ-
րայի մէջ ստորագրութեանց դուռնարը
ծանօթ չէ, այսօրվա իմացուի բայց
պէտք եղածին եռասպատիկն ան-
ցած է կըսուի:

Մայրաքաղաքիս մէջ ալ երեք
միլիոնի մօտ հասած է:

Կը հաւաստեն թէ ստորագրողաց
կանխիկ վճարքին կէսն ետ պիտի
տրուի իրենց:

ԸՆԹԱՅՐ ԱՐԺԻԹՂՈՑ

Կ. Պոլիս 8 սեպտ.

Սօսիթէ յէնէրալի բաժինը Անգլիկի	78
« Փոխանակութեան »	4 22
Կ. Պոլսոյ Պանքային »	5, 3
Գրէտի Ժէնէրալ »	10
Գրէտի Օսթրո—թիւրք »	—
Երկաթուղաց հին »	119 1/4
» նոր »	83
Փոխ. 1863 »	338
» 1865 »	338
» 1869 »	286
» 1872 »	83 1/2
» 1873 »	272
Թրաւուէյ »	Օսմ. դր »

ցի մասին որ և իցէ սկզբնաւորութիւն և նպատակս ասանալու :

Ուրեմն ի՞նչ կըմնայ մեզ անելու :
Մենք դարձեալ բոլոր մեր յոյսը մեզ վերայ պէտք է դնենք : Երբ մեր ազգի մտաւոր դասը ձեռնառու է համարում իւր նպատակին այս դարձն, երբ ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը չէ ուղղում հոգս ունենալ մեր ազգային ուսումնարանները տնտեսական մասին, մենք ինքեանքս, որոնք մօտիկ ծանօթ ենք և աւելի կարեկից մեր ուսումնարաններին վիճակին, մենք միայն պէտք է առաջ տանենք այդ դարձը :

Դարձեալ մենք ուսուցիչներս մեր չնչին ուժակից օտարացած ազգից մեր ծանր և անշտրկակալ աշխատութեան համար, վեր դանք հանգստանալու այդ հազար ու դուստրն և նպատակնք թէ մեր դարձը թեթեւացներուն և թէ մեր ազգի մանուկները կարօտը լցուցանելուն :

Այսուհետեւ մեզ էլ ուրիշ տեղից օգնութիւն սպասելն անկարելի է և աւելորդ, լրագրութեան միջոցաւ այդ հարցը բազմիցս արծարծելուց մենք մինչև անգամ ձանձրացանք, և եթէ Հայ Ժողովուրդը մինչև անգամ չը կամեցաւ ձայնակից լինել մեզ, նշանակում է թէ նա բոլորովին չունի ցանկութիւն մտածելու իւր զաւակների կրթութեան վերայ : Մենք հասկանալով մեր Ժողովուրդի սառնասրբութիւնը և դէպի ազգային դարձերն անտարբերութիւնը, չը պէտք է յուսահատուինք և այդ դարձից փախչինք, ապագայ մերն է : Թո՛ղ մերայինք իւրեանց պատիւը չը ձանաչեն, մենք թէ նոցա կարիքը և թէ մեր պատիւը ձանաչենք, աղքատներս զոհենք յօգուտ հարուստների : Թո՛ղ վայելեն նոքա մեր նուէրը և պարծենան :

... Խմբագիր :

Հաճեցէ՛ք ներկայ նամակիս և հետեւեալ ցուցակին հիւրընկալութեան մի տեւր շնորհել ձեր պատուական Մասեաց ըստորոտը :

Վերջերս՝ Վասպուրականի հորվոյնին վրայ փախչացող երկու լուսաւոր աստղերը, այն է՝ Ս. Սանդխտեան եւ Հայկազեան քոյր և եղբայր դպրոցները՝ իրենց ըստ բաւականին յառաջադիմութեամբ այնչափ զգալի եղան, որ թէ՛ ի. Պօլոյ, թէ՛ Ռուսաստանի, և որ աւելին է՝ հեռաւոր քաղաքներէն անդամ արձագանք դուռն, և այնպիսի բարեբարներ հանդիսացան, որք իրաւամբ թշուառներու ակօղիչ կոչելու արժանի են :

Ահաւասիկ նուիրական պարտք մի կը դնէ մեր վրայ յօրինակ բերել Ռուսմանիոյ մէջ Ֆօքլանու մեծապատիւ ազգայնոց աստատման նուիրատուութիւնը, զոր յանուն երկուսեւ դպրոցացն Վասպուրականի շնորհած են ի ձեռն վանեցի երաւանդեան Սրբ. Տ. Գալուստ անձնուէր հօր :

Ս. և Հ. ընկերութեանց Տնօրէն Ժոզովներն անհուսալի կերպով երախտապարտ կը ձանչեն զիրենք խորին շնորհակալութիւն մատուցանել Ֆօքլանու այն ազնիւ բարերարաց, և մասնաւորապէս Ֆօքլանու Մեծ. Գալուստ անձնուէրին, որոնք իրենց յոյսովս բարերարաց անմահ անուաները պիտի օրհնեն և փառաւորեն :

Ահաւասիկ յանուն Վասպուրականի երկուսեւ դպրոցաց Ռուսմանիոյ Պօլոյն

քաղաքի նուիրատուաց ցանկը : Օտանեան լրաց 100 զրէի հաշուով :

Մեծապատիւ աղայք	50
Վարդան Կոյաւեան	50
Թէոփորոս	50
Համեստ Ազիզ տիկ.	50
Հովհաննէս Մարտիրոս	50
Վարդան	50
Աւետիս Գալուստեան	50
Համեստ Մարգարիտ տիկին	25
Վարդան Պրոնիկիւնեան	50
Խաչիկ Ստուպանտուր Մաննի	25
Լուսիկ Ստեփան Կոյաւեան	50
Եղբարք Դանիւսեան	50
Մանուկ Ա. Գարուստեան	25
Թէոփորոս Ազիզեան	25
Գալուստ Կոյաւեան	50
Խաչերես	100
Գարուստեան, Գէորգ	
և Խաչատուր Կոյաւեան	50
Գարուստեան, Աստուածատուր, Աբրահամ	
Համ Գալուստ Պլյուքեան	100
Էմիլեայ, Գէորգ Մարտիրոսեան	25
Պօլոս Մարտիրոսեան	50
Թադէոս Վարդերեսեան	25
Աստուածատուր Կոյաւեան	25
Համեստ Զանազան տիկին Մարտիրոսեան	50
Խաչերես Մանուկեան	50
Հայրենասէր ոմն Եւալի	25
Ինձէ Բօպէրթ	100
Միլի	100

Ֆօքլանու Մեծ. ազգայնոց նուիրատուաց անուանք :

Մեծապատիւ աղայք	300
Ալթըն Աճէմեան	50
Վարդան Մարտիրոսեան	50
Գրիգոր Զարեան	50
Գալուստ Խաչատուրեան	50
Սեմին Սեմինովիչ	100
Գարուստեան Բարսեղի	100
Կարապետ	100
Մանուկ Գաւիթեան	100
Մ. Աբրահամ Գէորգեան	100
Ստեփան	100
Գալուստ	100
Սարգիս Բարսեղի	50
Գրիգոր Գաւիթեան	50
Աստուածատուր Գրիստոֆ	50
Եղիա Մուրատեան	50
Նիկողայոս Ստեփանեան	50
Զատիկ Նեկրուց	50
Սահակ Ալթունովիչ Թէկուճ	50
Համեստ Դադիկ տիկին	50
Մկրտիչ Ազանեան	50
Գէորգ Անդրէասեան	50
Մկրտիչ Պրոնիկեան	40
Խաչիկ Կոյաւեան	40
Գարուստեան Կոյաւեան	60
Գէորգ Բոքրիկեան	20
Գովհաննէս	20
Սարգիս	20
Աստուածատուր	20
Գարուստեան Զարեանեան	20
Կարապետ Գալուստեան	20

Պ. Գալուստ Գովհան	20
Ալթըն Խաչերեսեան	20
Խաչիկ Սթոմոն	20
Գովհան Գալուստեան	20
Սեմին Աբրահամեան	20
Համեստապալ Տիրուհի Մարտիրոսեան	20
Միկրտիչ Միկրտիչ	20
Վարդան Բարսեղի	20
Սեմին Գալուստեան	20
Սահակ Գովհաննէսեան	20
Գովհաննէս Գալուստեան	20
Ստեփան Գալուստեան	20
Գալուստ	20
Մանուկ Գարուստեան	20
Տօնիկ Միկրտիչ	20
Գարուստեան Ալթունեան	20
Պ. Կարապետ Մանուկեան	20
Մկրտիչ Աստուածատուրեան	20
Խաչիկ Սարահամեան	20
Ստեփան Միկրտիչ	20
Թէոփորոս Մարտիրոսեան	20
Գովհաննէս Վարդանեան	20
Նիկողայոս Լուսիկեան	20
Գաւիթ Բամազեան	20
Գրիգոր Մ. Բարսեղի	20
Դոմին Վասիլի Թօպէզեան	20
	3780

Մասիս 1494 թուով հրատարակուած նախորդ Հանդանակութեան գումարը

4000
4780

Ահաւասիկ այն գումարը չնորհիւ Սրբ. Տ. Գալուստ հօր մեզ յանձնուած է. այսու, եւ հետզհետէ նուիրութիւնը դըրամով ինչպէս որ կանխաւ որոշուած է. յանուն Ռուսմանիոյ Մեծ. ազգայնոց ի. Պօլոյ մէջ մի սեփական կապուած առնելու որոյ արդիւնքն ի նպատակ երկուսեւ դպրոցաց պիտի դարձնուի ի փառս և ի պարծանս յաւերժական անմահ անուան նոցա :

Ի Կ. Պօլոս 9 սեպտ. 1874
Ի Ղիմեոյ Հայկ. ընկ. ֆ. ատենապետ
Դաւիթ Սեֆրուսեան
Գանձապետ Հայկ. ընկ.
Գեորգ Գեօրգեան
Ի Ղիմեոյ Ս. ընկ. ատենապետ
Թէօփ. ֆ. ֆեբրէյեան
Ասենապետ Սան. ընկ.
Սեֆր. Նալբանդեան
Ի Ղիմեոյ Ս. և Հ. ընկերութեանց
Ատենապետ
Խաչատուր Սեֆրուսեան

ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ի ՆԱԽԱՆԵՐԱՆՈՒԹԻՒՆ ԶՄԻՆՈՒՆԻՈՅ

ԹԻՒ ՏՈՒՄԱՅԱՑ 12000

Գին է-բոլշէ-բոլշէ 5 Գրուս
Գերիս շահող թիւս. այսինքն՝ Ա. Մեծ նոր տուն մը ի փռնիմա ճատտէսի թիւ 55, լայնութիւն 16 եւ երկարութիւն 80 կանդ ուն, 11 սենեկով, աղբիւրով ու պարտէզով արժէք 2000 Գաղղիական ոսկի. Բ. Պղտիկ Բուսիսեան մը չորս սենեկով ի փէշ-թըմալճըր Պաշը և Գ. Խանու թ մը ի Կիրիտ խան :

Վիճակահանութիւնս պիտի քաշուի անհրաժեշտաբար 1875 յունվարի 11/13ին ի Հայ Հիւանդանոցին : Ամեն տոմարի որ Հիւանդանոցի վարչութեան կնիքը չկրնի, անվաւեր է :

Մեծ տունը շահողը պիտի շնորհէ Հիւանդանոցին 120 Գաղղ. ոսկի Բուսիսեան շահողը 20
Խանու թը 10
Այս վիճակահանութեան տոմարներէն լրագրոյս գրասենեակին ալ գտնուելով, ուղղող կրնայ լրագրոյս ցրուիչէն ստանալ :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՏՈՒՄԱՆ ԸՆՏԸՆԵԿԱՆ

1874 — 1875

ԱՌԱՋԻՆՆՈՒՄ ԸՆՏ ԾԻՆԱՆՑ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Առատապարտաց Տ. Սրբուհի Ա. երեցեանց

Տպակ ի Տփլիս

1874

Անցեալ տարի Մասիսի միջոցաւ ծանուցուած վիճակագրական տուումարն է, որ Տուարական կարեւոր տեղեկութիւններէ զատ, ընդհանուր համաշխարհային վիճակագրութիւն մ'է ի մասնաւորի Ռուսիոյ և Թուրքիոյ Հայոց մանրամասն վիճակագրող կը պարունակէ, հանդերձ ազգային բարուց և սովորութեանց վերաբերեալ խնդիրներով :

Այս կարեւոր և հմտալից դարձը մայրաքաղաքիս ամեն Հայ դրամաճառաց քով կը գտնուի. դին 25 շրջ իսկ յառաջուց ստորագրելոց համար 15 շրջ :

Կը հրաւիրենք մեր միջոցաւ ըստ տորագրութեան, որ հաճին իրենց հասնելը օրինակները լրագրոյս դրամոսենեակէն ստանալ :

Այս առթիւ կը փութանք նաեւ ծանուցանել թէ Մեծ. աղա Աղէքսանդր երեցեանց և Տիկին Սրբուհի երեցեանց Կ. Պօլոս եկած են, ուր քա-

նի մ'ամիս կենալու դիմաւորութիւն ունին :

ԸՆԾԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ

Ա. Ե. Բ.

Տպակ ի Տփլիս

Երկու տետրակ, քորոց միւս ազգային դատարարականութեան համար վարժապետներ պատրաստելու խնդրոյն վրայ կ'ըսուէ, միւսն ալ Ռուսաց տեղութեան մեր ազգին ուսումնարաններուն նկատմամբ ըրած տնօրէնութեան և Տփլիսի մէջ ազգային վարժապետանոց մը հիմնելու խնդրոյն վրայ կը խօսի :

Մայրաքաղաքիս ամեն Հայ դրամաճառաց քով կը գտնուին : Դին 5 սկան շրջ :

ՀԱՐԻՐԻՆ 25 ՁԵՂԶ

ՄԻՆԵՐԱՆԵՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՆՑ

ՆՈՐԱԿԱՆՈՅ

ԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՃԱՌԱՏԱՆ ԲԱՑՈՒՆԻԸ

Ս. Մ. Միննսթեյն եւ ընկերք պատիւ կը համարին ծանուցանել արդոյ հասարակութեան, որ իրենց Ամերիկեան վաճառատունը վերադառնալու և և սոյն առթիւ իրենց բոլոր վաճառքները զեղչով պիտի ծախուին ինչպէս սկսեալ օգոստ. 8/20էն մինչև 18/30 սեպտեմբեր. ուստի հասարակութիւնը յարգանք կը հրաւիրուի այս պատեհութեան օգուտ քաղելու :

Կարի դարձիք՝ Սպա եւ երկաթ խողովակներու գիններէն միայն հարկւրն 10 զեղչ պիտի ըլլայ :

Բոլոր միւս վաճառաց գիններէն հարկւրն 25 զեղչ պիտի ըլլայ :

Ամերիկեան վաճառատունը ձմար գարունի Դաւաթիս

13

ԾԱՆՈՒԹՈՒՄ

Երէկ տաւ օտ Կ. Պօլոյ Պալլադ Բազարէն մինչև Մեծ Նոր խան երթալու ճանքուն վրայ թուղթեղով ծըրար մ'իսկոծ է, Գալուստ Մեծ Նոր խան թիւ 22 սենեակը տանելով իւր վարձքը պիտի ընդունի :

Ի ԱՆՆ

Պէյդա Տէպագլանէսի իշին մուսպայեա օրուսաճողը պուստան ապաւիտիւն օրունան 40 պարկի դուրս վիճութիւնէ պուստան մաքրանալն ֆիւտթը սէհլէ մէսին 1150 լիրա եազըմը իստէ, 1150 լիրա օրուսաճ 2150 ինկիլի լիրաճա օրուսաճ վէ գաւարը գալիս իւր լրուսին օնպիւրինճի չէարչէնպիս կրնին թէք օրուսաճա մալիս օրուս իւզէրէ թէքար իւսնը քէ յփլիթ իւթ խտար օրուսաճ :

9 իւլ 1874 Պալլ Սէրասքէրի

Աստիքի Ծահանէ Էլպիսէ անպարնա լուսաւի օրուս միւսապայե գծրան 30000 չիֆթ Սիլիսիսաք քերի եուն չորապըն պէհէր չիֆթի 3 շրջ 10 փարապա, վէ Սէրասքանէ անպարը իշին տալիս լուսաւի օրուն 900 շրջէ պարսիսուն պէհէր դը յէսի 29 շրջա օրուսաճ թալպիլէրի էօհէսիսուն օրուս, իւր լուսին օն իւրինճի փէհէնպիս կրնին դաւարը գալիլիլի վէրլէնէ լիրանէ, պուստան աշաղը ֆիւտթիլէրի թիւ մէյէ թալպ օրուսաճ եհլի մէհքիւրէ Տարը Ծուրայի ասքէրլէ կէլ մէլէրի :

7 իւլ 1874 Պալլ Սէրասքէրի

Ի Դպրախմբիս Պահճէ Գորու